

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՅՎԱԶՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԱՆԴՐԱՆԻԿԻ

**ԵՐԵՄԻԱ ԶՅՈՄՈՒՐՃՅԱՆԻ
ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

**Է. 00. 05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր Հովհաննիսյան Պ. Հ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մարգարյան Հ. Գ.

պատմական գիտությունների թեկնածու
Վիրաբյան Ա. Ս.

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. սեպտեմբերի 23-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հուլիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Երեմիա Քյոմուրճյանի գրական վաստակի համակողմանի և խորքային քննությունը նշանակելի է ոչ միայն իր ունեցած աղբյուրագիտական մեծաթիվ կարևորությամբ, տեսական-պատմագրական ընդհանրացումներ կատարելու հարուստ ու բազմակողմանի հիմքով, քաղաքակրթական նորարծարծ հարցադրումների և տեղաշարժերի նկատմամբ հայ պատմագրական մտքի ցուցաբերած ճկունության հանգամանքով, այլև ունի խիստ հստակ ու որոշակի քաղաքական արդիականություն՝ որպես մի խոսուն կռվան՝ հակադարձելու նախկին օսմանյան միջավայրից հայկական ֆիզիկական ու հոգեմտավոր գոյության հետքերն իսկ կորսցնելու քաղաքական շահատակություններին ու պատմագիտական նենգափոխումներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է քննության առնել XVII դարի հայ մատենագրական մտքի ականավոր ներկայացուցիչներից Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի պատմագրական ժառանգության հարուստ ու բազմաժանր շերտերը՝ հարցը դիտարկելով բնագրային, աղբյուրագիտական-համադրական, տեսական հարցերի համապատկերում: Ձեռնամուխ լինելով նշյալ ուսումնասիրությանը՝ առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- Նորովի անդրադառնալ Երեմիա Քյոմուրճյանի մատենագրական վաստակին, հնարավորինս ամբողջացնել քյոմուրճյանական ինքնագրերի և գրչագրերի նկարագրության, տեղաբաշխվածության, աշխարհի մեծ ու փոքր ձեռագրական հավաքածուներում դրանց ներկայացվածության պատկերը:

- Կատարել աղբյուրագիտական քննություն պատմա-համեմատական, բնագրային-համադրական սկզբունքով: Գտնել և ճշտորոշել Երեմիա Քյոմուրճյանի պատմագրական ժառանգության վրա ներազդած գրական ակունքներն ու սնուցանողական հիմքերը, միաժամանակ ցույց տալ այն ճանապարհները, որոնք բացահայտում են Երեմիա Քյոմուրճյանի խոր ազդեցությունը հետագայի հեղինակների պատմահայեցողության ու հաղորդած աղբյուրագիտական տվյալների վրա:

- Խմբավորել Երեմիա Քյոմուրճյանի հաղորդած աղբյուրագիտական տվյալները՝ ըստ աշխարհագրական, պատմա-քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, հոգևոր-մշակութային, էթնիկ փոխներթափանցումների հիմքի, տալ հեղինակի թողած գրական ժառանգության գնահատականը:

- Որոշակի բովանդակային, ոճական-ժանրային հիմքով առանձնացնել և դասակարգել Երեմիա Քյոմուրճյանի պատմագրական ժառանգության քաղադրատարրերը, տիպաբանական նմանակերպության բացահայտման ճանապարհով կատարել անհրաժեշտ մակածություններ ու ընդհանրացումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՔԵՐԸ: Աշխատանքը շարադրված է թեմային առնչվող ձեռագրական, արխիվային նյութերի, սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համադիր հետազոտության միջոցով և պատմա-

բանասիրական, քննական ու համեմատական վերլուծության սկզբունքի կիրառմամբ:

ԱՏԵՆԱՒՍՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ատենախոսության բնույթը ժամանակագրական հստակ սահմաններ չունի: Թեմայի ժամանակագրական հիմնական առանցքը XVII դարի երկրորդ կեսն է: Բնության են առնված նաև ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ հայոց ամբողջական պատմության հարցեր՝ սկզբից մինչև հեղինակի ապրած օրերն ընկած ժամանակային ընդգրկմամբ:

ԱՏԵՆԱՒՍՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ներկայացվող ուսումնասիրությունը դիտարկվող հարցերի ամբողջությամբ կատարվում է առաջին անգամ: Ատենախոսության էջերում փորձ է արվել տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական ուսումնասիրությունների համակողմանի քննության ու վերլուծության համապատկերում լուսաբանել Երեմիա Չելեպի Քյոնուրձյանի կյանքին ու պատմագրական ժառանգությանն առնչվող վիճահարույց ու մութ հարցերը: Երեմիա Քյոնուրձյանի ստեղծագործական վաստակը ցայսօր չի արժանացել բազմակողմանի ու ամբողջական պատշաճ ուսումնասիրության: Հեղինակի անտիպների մեծ քանակը չի խոսում անցյալի ժառանգությանը հայագիտության ցուցաբերած բարեխիղճ ու հոգածու վերաբերմունքի օգտին: Ձեռագիր միավորների քանակական նման բազմազանության պայմաններում պատկերն անմխիթար է հեղինակի քննական բնագրերի պատրաստման և հրատարակության հարցում: Բացի հայոց պատմության հիմնախնդիրներին աղերսվող աղբյուրագիտական տվյալների կարևորությունից, որ ունի Երեմիա Չելեպիի պատմագրական ժառանգությունը, ուշագրավ է այն մեծարժեք ներդրումը, որ կարող է ունենալ Երեմիա Չելեպին ինչպես մերձավորարևելյան և օսմանյան, այնպես էլ եվրոպական պատմագիտության մեջ: Այս ուսումնասիրությունը կարող է ուղենիշ ծառայել հեղինակի բնագրերի քննական հրատարակության, ինչպես նաև հայոց և հարևան երկրների պատմական անցյալին առնչվող հեղինակի վկայությունները նորովի արժևորելու և օտար լեզուներով քարգմանելու ու շրջանառելու գործում:

Ատենախոսությունն ունի ճանաչողական և կիրառական նշանակություն: Աշխատանքի դրույթները կարող են օգտագործվել բուհական կրթական համակարգում՝ Հայաստանի և հարակից երկրների պատմության, աղբյուրագիտության և պատմագրության դասընթացների շրջանակներում:

ԱՏԵՆԱՒՍՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնում: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հինգ հոդվածներում և միջազգային գիտաժողովներում ներկայացրած զեկուցումներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՐՔՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ):

Ատենախոսության շարադրանքում օգտագործված նյութերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ա. անտիպ (ծեռագրեր, հիշատակարաններ, արխիվային վավերագրեր) և տպագիր սկզբնաղբյուրներ, բ. անտիպ և տպագիր ծեռագրացուցակներ, մատենագիտական ցանկեր, գ. գիտական ուսումնասիրություններ (մեմագրություններ, հոդվածներ):

Երեմիա Քյոնուրճյանի ոչ բոլոր ձեռագրերն են եղել մեր տրամադրության ներքո. քննել ու անհրաժեշտության դեպքում օգտագործել ենք Երևանի Մատենադարանում պահվող բոլոր այն գրչագրերը, որոնք երբևէ չեն հրատարակվել ու որոշակի փաստական նյութ են պարունակում: Հեղինակի անտիպ ժառանգության նմուշներից են Մաշտոցի անվ. Մատենադարանի հմր. 72, 1786 ձեռագրերը: Այս աշխատանքի համար անգնահատելի նշանակություն է ունեցել Երեմիա Չելչայի անտիպ գործերից՝ «Տարեգրական պատմութիւն» աշխատությունը, որը մեզ հասու է եղել Վենետիկի Սիփթարյան մատենադարանի հմր. 476 ձեռագրի լուսապատճենի տեսքով¹: Հեղինակի անտիպների ցրվածության, որոշ դեպքերում նաև անհայտության պայմաններում սկզբնաղբյուրային կարևոր նշանակություն ունեն Ղևոնդ վրդ. Փիրղալեմյանի կազմած «Յիշատակարանք կամ Նշխարք պատմութեան հայոց»-ի երկրորդ հատորում տեղ գտած տեղեկությունները², որոնք առանձին հատվածներ են Քյոնուրճյանի ստեղծագործություններից ու մի քանի ընդարձակ հիշատակարաններ, որ, մեր կարծիքով, Ղևոնդ վարդապետը քաղագրել է «Վիպասանութիւն յառոււն Կրետե կղզւոջ» և «Վիպասանութիւն յԱպրօ Չէլչայի» գործերից: Առաջինը գտնվում է Փարիզի Ազգային գրադարանում (ձեռ. հմր. 338), երկրորդի տեղն անհայտ է:

Երեմիա Քյոնուրճյանի պատմագրական ժառանգության ուսումնասիրման համար առաջնային նշանակություն ունեն նրա բնագրերի հրատարակությունները, որոնք, թեև չեն կատարվել գոյություն ունեցող բոլոր ձեռագրերի քննական-համեմատական ճանապարհով ու արդեն մեր օրերում տեղ-տեղ վերանայման, վերագնահատման կարիք ունեն, սակայն չեն կորցրել իրենց արժեքն ու հիմնարար նշանակությունը: «Ստամպոլյ պատմութիւն» երկի եռահատոր հրատարակությունը՝ ընդարձակ ծանոթագրություններով, իրականացրել է Վ. Թորգոմյանը Վիեննայում³: Նա բնագիրը պատրաստել է՝ ձեռքի տակ ունենալով միայն երեք ձեռագիր, որոնցից երկուսը ներկայումս գտնվում են Երևանի և Փարիզի հայերեն ձեռագրերի հավաքածուներում, երրորդը ժամանակին մաս է կազմել մասնավոր հավաքածուի, որի ներկայիս տեղը մեզ հայտնի չէ: Մեր տվյալներով գոյություն ունի երկի չորս ձեռագիր, որոնցից մեկը հեղինակի ինքնագիրն է, որ անծանոթ է եղել Վ. Թորգոմյանին: Այսպիսով, «Ստամպոլյ պատմութիւն» երկի այս հրատարակությունը միակն է, սակայն լավագույնը չէ: Բնագիրը շատ մեծածավալ չէ, սակայն հրատարակությունն իրականացվել է հանգամանալի ու չափազանց ուշագրավ ակնարկներով, մեկնաբանություններով, որոնք հիմնված են ոչ թե քաղաքի պատմական անցյալի վրա, այլ ավելի շատ ներկայացնում են XVII դարից հետո քաղաքային միջավայրում կատարված ձևափոխումներն ու զարգացումները: Հատկապես երկրորդ և երրորդ հատորների պարագային տպավորությունն կա, որ Վ. Թորգոմյանը ներշնչված Երեմիա Քյոնուրճյանով մի տեղագրություն էլ ինքն է կազմել, որը լիովին կարող էր հանդես գալ իբրև հեղինակային առանձին աշխատանք:

¹ Այն մեզ է տրամադրել Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանը:

² ՄՄ Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, ձեռ. հմր. 4515:

³ Երեմիա Չելչայի Քեօմիլրճեան, Ստամպոլյ պատմութիւն, հրատարակեց և ծանոթագրեց՝ Sopp. Վ. Թորգոմեան, հատ. Ա, Վիեննա, 1913; հատ. Բ, 1932; հատ. Գ, 1938 (այսուհետև՝ Ստամպոլյ պատմութիւն):

Աղբյուրագիտական անգնահատելի արժեք ունի Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկը⁴: Մեսրոպ արք. Նշանյանը աշխատանքը հրատարակության է պատրաստել Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ձեռագրատանը պահվող հեղինակային ինքնագրի (ձեռ. հմր. 1893) հիման վրա: Մ. Նշանյանը վիթխարի աշխատանք է կատարել՝ շրջանառության մեջ դնելով XVII դարի երկրորդ կեսի հայոց և օսմանյան պատմության վերաբերյալ արժեքավոր աղբյուրագիտական տեղեկություններ: Բացի բուն «Օրագրութիւն»-ից՝ կից «Յաւելուած»-ով հատորում խնամքով ներկայացված են Երուսաղեմի ձեռագրական հավաքածուում պահվող Երեմիա Չելեպիի հեղինակած բազմաթիվ գանձերը, ողբերը, ցանկներն ու ներբողները⁵: Ուշագրավ ուսումնասիրություն է հրատարակության առթիվ Մ. Նշանյանի պատրաստած ընդարձակ ներածությունը, մեծ է վերջինիս ներդրումը Քյոմուրճյանին նվիրված իր ժամանակի այլ ուսումնասիրություններում ևս, որոնց հեղինակների շատ հարցեր ու կասկածներ նա մեծահոգաբար փարատել է Երուսաղեմի ձեռագրերից քաղված բազմաթիվ արժեքավոր տվյալներ ուղարկելով վերջիններին: Մ. Նշանյանի այս հրատարակությունը Քյոմուրճյանի բնագրերի բոլոր հրատարակությունների մեջ միակն է, որ կատարվել է ինքնագրից, որի այլ ընդօրինակություններ հայտնի չեն: Հետևաբար, բացի այս աշխատանքից՝ Երեմիա Քյոմուրճյանի բնագրերի մյուս բոլոր հրատարակությունների դեպքում, որ կատարվել են կա՛մ ոչ բոլոր ձեռագրերի, կա՛մ եղած միակ գրչագրի հիման վրա, լավագույն քննական բնագրի հարցը դեռևս առկայիս է:

Երեմիա Քյոմուրճյանի «Պատմութիւն Դճ տարւոյ օսմանցոց թագաւորացն» երկը աշխատասիրել, արժեքավոր ծանոթագրություններով ու առաջաբանով հրատարակել է Ժ. Ավետիսյանը⁶: Բնագիրը նա պատրաստել է այս գործի՝ մեզ հասած միակ ձեռագիր օրինակի (ՄՍ ձեռ. հմր. 1675) հիման վրա, որ հեղինակի ինքնագիրը չէ, XVIII դ. երկրորդ քառորդին կատարված ընդօրինակություն է:

Երուսաղեմի հմր. 892 ձեռագրի հիման վրա Գ. Բամպուքճյանը հրատարակել է «Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպօլսոյ» գործը⁷: Արժեքավոր են ոչ միայն Երեմիա Քյոմուրճյանի կյանքի և գործի մասին Գ. Բամպուքճյանի ներածական ընդարձակ հաղորդումը ու դիտարկումները, այլև 1660 թ. հրդեհի վերաբերյալ հայ մատենագրության մեջ եղած վկայությունները, որ նա ավելորդ չի համարել զետեղել գրքում:

Տարիներ ի վեր հայագիտությանը անհայտ էր Բուլոնիայի ճշգրիտ գիտությունների ակադեմիայի գրադարանում պահվող «Աշխարհագրութիւն կամ Հայաստանեայց եկեղեցւոյ քարտեզ» գործը: Վերջին տասնհինգամյակում քարտեզագրության մեթոդային մասնագետների ու իր աշխատասիրությամբ այն

⁴Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քեօմիւրճեանի, հրատ.՝ Մեսրոպ արքեպս. Նշանեան, Երուսաղէմ, 1939 (այսուհետև՝ Օրագրութիւն):

⁵Յաւելուած, տե՛ս Օրագրութիւն, էջ 405-670 (այսուհետև՝ Յաւելուած):

⁶Երեմիա Քեօմիւրճեան, Պատմութիւն Համառօտ Դճ տարւոյ Օսմանցոց թագաւորացն, աշխատ.՝ Ժ. Ավետիսյանի, Երևան, 1982 (այսուհետև՝ Երեմիա Քեօմիւրճեան, Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ):

⁷Երեմիա Չելեպի Քեօմիւրճեան, Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպօլսոյ, հրատարակութեան պատրաստեց՝ Գ. Բամպուքճեան, Ստանպուլ, 1991 (այսուհետև՝ Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպօլսոյ):

հրատարակել է Գ. Ուլուհոճյանը⁸: Ժամանակակից քարտեզագիտության համար այս գործը դեռևս կարող է նորանոր մոտեցումների ու լուծումների հիմք դառնալ: Հրատարակության առթիվ կարևոր ճշգրտումներ են մտցնում նաև Գ. Ուլուհոճյանի հոդվածները⁹:

Երեմիա Քյոմուրճյանի գործերի հրատարակությունը մեծապես զբաղեցրել է Հ. Քյուրտյանին: Եհիշտ է, նա բնագրային հետազոտության է ենթարկել Երեմիա Քյոմուրճյանի՝ համեմատաբար փոքրածավալ գործերը, սակայն մեջտեղ է բերել կարևոր տեղեկություններ, շրջանառել բացառապես անհայտ բնագրեր¹⁰:

Երեմիա Քյոմուրճյանի բնագրերի հրատարակությամբ զբաղվել են նաև Տ. Պալյանը¹¹, Ա. Չոպանյանը¹², Ն. Ծովականը¹³, Ն. Ակիմյանը¹⁴, Հ. Սահակյանը¹⁵: Երբեմն նրանք կրկնել են իրար՝ հաճախ ներկայացնելով քյոմուրճյանական բնագրերի տսկ հատվածային հրատարակությունը:

Առանձնակի կարևորություն ունեն հեղինակի գործերի թարգմանությունները օտար լեզուներով: Ժամանակին մեծ արձագանք է գտել «Ստամպոլյոյ պատմութիւն» երկի Հ. Տեր-Անդրեասյանի կողմից իրականացրած թուրքերեն թարգմանությունը¹⁶, որ ուղեկցվում է թարգմանչի ընդարձակ առաջաբանով: Թարգմանությունը նա կատարել է Վ. Թորգոմյանի պատրաստած բնագրի հարազատությամբ: Այլ է պատկերը Ա. Սանջյանի անգլերեն թարգմանությամբ հրատարակված «Վասն էքմէքճի առնաւուտ Տիմոյի ումեմն, որ սիրեաց զաղջիկ մի հրէի Սրգատայ անուն» գործի դեպքում¹⁷: Թարգմանությունը կատարվել է Նյու Յորքի Հանրային գրադարանի Սպենսեր հավաքածուում պահվող գրչագրի հիման վրա (ծեռ. հմր. 5)

⁸ G. Uluhogian, *Un'antica mappa dell'Armenia. Monasteri e santuari dal I al XVII secolo*, Ravenna, Longo Editore Ravenna, 2000.

⁹ Ուլուհոճյան Գ., Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի նորահայտ քարտեզը, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 2, էջ 185-188: Նույնի՝ Գանձասարի կաթողիկոսությունն ըստ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի քարտեզի, «Պատմա-բանասիրական հանդես», 2003, N 1, էջ 158-165:

¹⁰ Յ. Քիւրտեան, Հայոց գաղթը Կամենիցեն Ֆիլիպէ (1670-1674). պատմական վաւերաթուղթ մը, «Բազմավէպ», 1927, թիւ 8-9, էջ 237-239: Նույնի՝ Նիւթեր պուլկարահայոց պատմութեան համար. վաւերագրութիւն մը, «Բազմավէպ», 1929, թիւ 11-12, էջ 345-348: Նույնի՝ Յիշատակարան մը 1677էն Ֆիլիպէի Ա. Գեորգ եկեղեցւոյն վրայօք, «Բազմավէպ», 1930, թիւ 4, էջ 161-166: Նույնի՝ Նոր միւթեր Երեմիա Չելեպի Քեօմիւրճեանի մասին, «Բազմավէպ», 1966, թիւ 7-8, էջ 178-179, 1967, թիւ 3-5, էջ 88-94, թիւ 6-8, էջ 143-144:

¹¹ Տ. Պալեան, Հայ աշուղներ, «Բիւրակն», Կ. Պօլիս, 1898, թիւ 34-35, էջ 612-613:

¹² «Ամահիտ», հանդես ամսեայ, Բարիզ, 1903, թիւ 9, էջ 189-191:

¹³ Թուղթ սիրոյ առ Նիկոմիդացիս, հրատարակեց՝ Ն. Ծովականը, տես «Սիւն», Երուսաղէմ, 1932, թիւ 12, էջ 393:

¹⁴ Երեմիայ Չելեպոյ գանձ ի վերայ Յակոբ կաթողիկոսին, Երեմիա Չելեպի Քեօմիւրճեան. կեանքն եւ գրական գործունեութիւնը, «Հանդէս ամսօրեայ», 1933, թիւ 9-10, էջ 588-595:

¹⁵ Հ. Սահակյան, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի մի անտիպ պոեմը, «Բանբեր Մատենադարանի», N 6, Երևան, 1962, էջ 409-427: Հմմտ. «Բազմավէպ», 1967, թիւ 6-8, էջ 144-149:

¹⁶ Eremya Çelebi Komürçüyan, *Istanbul Tarihi, XVII. asırda İstanbul, tercüme Hrand D. Andreasyan*, İstanbul, 1952.

¹⁷ A. K. Sanjian and A. Tietze (ed. and tr.) Eremya Chelebi Kômürjian's Armeno-Turkish Poem "The Jewish bride", Budapest, 1981.

Ա. Սանջյանի և Ա. Թիցեի արժեքավոր աշխատասիրությամբ: Թարգմանիչների ուշադրությանն է արժանացել նաև հեղինակի «Երգ եւ զովասանութիւն ասացեալ ի վերայ սբ. Աստուածածնին» գործը՝ թարգմանվելով ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով¹⁸: Քյոնուրճյանին վերագրվող «Տաղ ի վերայ կաքւոյն» բանաստեղծության անգլերեն թարգմանությունն է հրատարակել Ղ. Ալիշանը¹⁹:

Երեմիա Քյոնուրճյանը հայտնի է եղել դեռևս իր ժամանակի պատմագրական շրջանակներում. նրա հետ անձնական շփումներ է հաստատել և դրվատանքի խոսքեր ասել Ջաքարիա Քանաքեռցին²⁰, ծավալած ստեղծագործական գործունեությանը ծանոթ եղել՝ Առաքել Դավրիժեցին²¹, ընտանեկան սերտ կապերով կապված եղել՝ Մինաս Ամղեցին²²:

Երեմիա Քյոնուրճյանի բնագրերի ինքնագիր և գրչագիր օրինակների հանգամանակի ու ամբողջական պատկերը ներկայացնելը այս ուսումնասիրության առանցքային խնդիրներից մեկն է: Այդ աշխատանքը կատարվել է՝ առաջնորդվելով Դ. Անասյանի²³, Օ. Եգանյանի²⁴, Բ. Կուլիի²⁵ կազմած մատենագիտական աշխատություններով, որ ներառում են ինչպես անտիպ, այնպես էլ տպագիր ձեռագրացուցակների տվյալներ: Աշխատանքը իրականացվել է վերը նշված մատենագիտական ցանկերի ձեռագրական բոլոր միավորների հիշատակման հետքերով հավատարմորեն շարժվելու ճանապարհով՝ բացառությամբ թերևս այն դեպքերի, երբ այդպես էլ հնարավոր չի եղել ձեռք բերել այս կամ այն ձեռագրի նկարագրությունը, ինչը, սակայն, խիստ սակավադեպ է եղել:

Երեմիա Քյոնուրճյանի գործունեությունը մեծ չափով գրավել է Մխիթարյան միաբանության հայրերին: Շատ դեպքերում Երեմիայի երկերը արժեքավոր սկզբնաղբյուրային նշանակություն են ունեցել նրանց ուսումնասիրությունների ու հետազոտական աշխատանքի համար: Քյոնուրճյանի՝ վիեճակահան և վեճետիկյան ձեռագրերին իրենց քաջատեղյակության շնորհիվ Մխիթարյանները դարձել են նրա գրավոր ժառանգության մասին կարևոր տեղեկությունների հեղինակ: Երեմիա

¹⁸В. Брюсов, Песня любви, Антология Армянской поэзии с древнейших времен до наших дней. Под ред. С.С. Арутюняна и В.Я. Курномина. Москва, 1940, стр. 303. (Ֆրանս.) Լ.-Ա. Marcel, Chant d'amour, . Լ.-Ա. Marcel, G. Poladian, Choix de poems arméniens, Beirut, 1980, p. 107-108. Լ.-Ա. Marcel, Chant d'amour, տե՛ս «Անդաստան», պարբերական գրականութեան եւ արուեստի, 14 (1963), էջ 56-57:

¹⁹ Ղ. Ալիշան, Հայոց երգք ռամկականք, Վենետիկ, 1852, էջ 53-55:

²⁰ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաթյան, Երևան, 1984, էջ 644-646:

²¹ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատութեանց, աշխատասիր.՝ Լ. Խանկարյանի, Երևան, 1990:

²² Տե՛ս «Օրագրութիւն Մինաս պատրիարքի Ամղեցոյ» երկը. անտիպ է (ԵՄՅՄ ձեռ. հմր. 1316): Մ. Նշանյանը հրատարակել է ձեռագրի նկարագրությունն ու Քյոնուրճյան ընտանիքին վերաբերող վկայությունները, տե՛ս Օրագրութիւն, էջ 6ԼԶ-6ԼԿ:

²³ Դ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ LXXV-XCV; հատ. Բ, Երևան, 1976, էջ V-XXII:

²⁴ Օ. Եգանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաթյան, Երևան, 1965, էջ 198-211:

²⁵ B. Coulie, Répertoire des bibliothèques et des catalogues de manuscrits arméniens, Brepols-Turnhout, 1992.

Քյոնուրճյանի «Տարեգրական պատմութիւն» երկի տվյալները մեծ չափով հիմք են եղել Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ի երրորդ հատորի համապատասխան ժամանակաշրջանի դեպքերը ներկայացնելիս²⁶: Պատմա-աշխարհագրական իր ուսումնասիրություններում Երեմիա Քյոնուրճյանի տեղագրական վկայություններին մեծ տեղ է հատկացրել ու դրանց շուրջ իր ուշագրավ դիտարկումներն արել Ղ. Ինճիճյանը²⁷: Քյոնուրճյանի գործերի արժեքը բարձր է գնահատել Ղ. Ալիշանը: Նրա մի շարք աշխատություններ, թեև փոքր, բայց կարևոր դրվագներ են պահպանել հեղինակի գրական ժառանգությունից²⁸: Երեմիա Չելեպիի հանդեպ իր պապի՝ Մաղաքիա ճեվահիրճյանի համակրանքն է կիսում ու կատարած գործը արժևորում Մ.Վ. Մաղաք-Թեոփիլյանցը²⁹: Քննվող հարցը ուշադրության ու հետաքրքիր մեկնաբանությունների է արժանացել նաև Գ. Ջարբիանայանի³⁰ և Գ. Գալեմբարյանի³¹ ուսումնասիրություններում:

Հարցի պատմության մեջ անօրինակ է Ն. Ակինյանի ունեցած ներդրումը: Նրա ուսումնասիրությունները համակողմանի անդրադարձ են Երեմիա Չելեպիի անձին ու գործին³²: Տարիներ շարունակ Քյոնուրճյանին նվիրված նրա մենագրությունը հիմնարար նշանակություն է ունեցել հետագայի ուսումնասիրողների համար, թեև մեր օրերում նույնպես այն չի կորցրել իր գիտական արժեքը, սակայն վաղուց ժամանակն է նորովի անդրադառնալ խնդրին: Արժեքավոր կարող էր լինել Ս. Երեմյանի նախածեռնությունը ներկայացնելու Երեմիա Քյոնուրճյանի «Տարեգրական պատմութիւն» երկը, ինչը, սակայն, անավարտ է մնացել³³:

Երեմիա Քյոնուրճյանի կերպարը շատ հոգեհարազատ է եղել Լեոյին: Ակնհայտ է նրա համակրանքը և հիացմունքը պատմագրի անձին ու գործին: Իր ուսումնասիրություններում նա քանիցս անդրադարձել է Երեմիային՝ տեղ-տեղ չափազանցված բարձր գնահատականների ու անվերապահ վերաբերունքի արժանացնելով վերջինիս³⁴:

²⁶ Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786:

²⁷ Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հատոր Ե, Վենետիկ, 1804: Նույնի՝ Ամարանոց բիւզանդեան, Վենետիկ, 1794:

²⁸ Ղ. Ալիշան, Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881: Նույնի՝ Այրարատ, Վենետիկ, 1890: Նույնի՝ Հայաստան. պատմիչք և պատմութիւնք Հայոց, մասն Ա, Վենետիկ, 1901: Նույնը, փոքրադիր, հատ. Ա, Վենետիկ, 1901:

²⁹ Մ. Վ. Մաղաք-Թեոփիլյանց, Կենսագրութիւն երեւելի արանց զոր ծաղկաքաղ համառոտաց յընդարձակ բառարանէն իւրմէ, հատ. Ա, Վենետիկ, 1839:

³⁰ Գ. Ջարպիանայեան, Պատմութիւն հայերէն դպրութեան, հատ. Բ, Վենետիկ, 1878, 510 էջ:

³¹ Գ. Գալեմբարեան, Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու, Վիեննա, 1915:

³² Ն. Ակինեան, Երեմիա Չելեպի Քեօմիւրճեան. կեանքն եւ գրական գործունեութիւն, Վիեննա, 1933: Նույնը, «Հանդես անօրեայ», 1932, թիւ 7-9, էջ 510-536, թիւ 10-12, էջ 624-677; 1933, թիւ 1-2, էջ 94-114:

³³ Ս. Երեմեան, Երեմիա Չելեպի Տարեգրական պատմութիւն, «Բազմավէպ», 1902, թիւ 8, էջ 367-369: թիւ 9-10, էջ 473-479:

³⁴ Լեօ, Հայկական տպագրութիւն, հ. I, Թիֆլիս, 1904: Նույնի՝ Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. III, գիրք I, Երևան, 1969:

Ուսումնասիրվող հարցի շրջանակներում անհնար է չհիշել Սաղաքիա արք. Օրմանյանի կոթողային «Ազգապատում» աշխատությունը³⁵: Նա շատ բարձր է գնահատում Երեմիա Քյոնուրճյանի դերը ազգային-քաղաքական կարևորություն ունեցող գործերում՝ փորձելով վերջինիս ներկայացնել էջմիածնական հոսանքի մեջ: Չվիճարկելով հանդերձ Ս. Օրմանյանի հեղինակությունը՝ կարծում ենք, որ պետք է որոշակի վերապահումով մոտենալ Երեմիա Քյոնուրճյանի և ժամանակաշրջանի մյուս գործիչների համար նրա օգտագործած բնութագրումներին ու գնահատականներին:

Երեմիա Քյոնուրճյանի անձը և ստեղծագործական վաստակը զբաղեցրել է նաև սփյուռքահայ ուսումնասիրողներին: Կցանկանայինք դրանցից առանձնացնել երկուսին՝ Յ. Սիրունուն³⁶ և Յ. Օշականին³⁷: Հետաքրքրական է, որ նրանց գնահատականները այս գործչին խիստ տարանջատ են: Յ. Սիրունին ամխախտ է իր դիրքորոշման մեջ, նա աներկբա մեծարանքի է արժանացնում Երեմիա Չելեպիին՝ նրան կոչելով՝ «մարդ, ով կը փրկէ իւր դարը» և այս հուզական ձևակերպումը անջնջելիորեն կապելով Քյոնուրճյանի անվանը: Այլ են Յ. Օշականի ապրումները. հեղինակին նվիրված իր խիստ ու անողոք գնահատականները ներկայացնելուց հետո նա, այնուամենայնիվ, ստիպված է ընդունել Երեմիա Չելեպիի գործունեության նաև մնայուն ու արժեքավոր կողմերը:

Խնդրի ուսումնասիրության գործում նշանակալի ավանդ են ներդրել նաև խորհրդային պատմագիտական մտքի մի շարք ներկայացուցիչներ: Երբեմն տուրք տալով հանդերձ իշխող գաղափարախոսության ինչ-ինչ ազդեցություններին՝ հարցի ուսումնասիրության պատմությունը նրանք հարստացրել են լուրջ գիտական-վերլուծական մոտեցումներով ու արժեքավոր հարցադրումներով: Կարևոր եզրակացությունների նախահիմք է Ա. Տեր-Ղևոնդյանի «Երեմիա Չելեպին որպես Մուննաջիմ Բաշիի աղբյուրներից մեկը» հիմնարար հոդվածը³⁸: Ուշագրավ են Երեմիա Չելեպիի գրական ժառանգությանը, ունեցած հասարակական-քաղաքական գործառույթներին տրված մեծանուն գիտնականներ Յ. Անասյանի³⁹ և Ա. Հովհաննիսյանի⁴⁰ գնահատականները: Հարցի պատմությանը իր ժամանակին կարևոր նպաստ է բերել Լ. Բաբայանի մենագրությունը⁴¹: Խնդրի ուսումնասիրության տեսակետից իր ամբողջականությամբ կարևոր է Հ. Սահակյանի աշխատությունը⁴²: Կարևորելով Երեմիայի Քյոնուրճյանին քննության նյութ դարձնելու ուսումնասիրողի նախընտրությունը՝ նշենք, որ գործը մեծապես կրկնում

³⁵ Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ հատոր, Ս. էջմիածին, 2001:

³⁶ Յ. Սիրունի, Պօլիսը եւ իւր դերը, հատ. Ա, Բէյրութ, 1965:

³⁷ Յ. Օշական, Երեմիա Չելեպի, «Սիոն», 1939, թիւ 9, էջ 331-338, թիւ 10-11, էջ 367-369, 1940, թիւ 1-2, էջ 30-35, թիւ 3, էջ 71-74, թիւ 4, էջ 103-109, թիւ 5-6, էջ 142-145, թիւ 7-8, էջ 194-198:

³⁸ Ա. Տեր-Ղևոնդյան, Երեմիա Չելեպին որպէս Մուննաջիմ Բաշիի աղբյուրներից մեկը, «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր», 1960, N 7-8, էջ 143-151:

³⁹ Յ. Անասյան, Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957: Նույնի՝ XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:

⁴⁰ Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959:

⁴¹ Լ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Երևան, 1984:

⁴² Հ. Սահակյան, Երեմիա Քյոնուրճյան, Երևան, 1964:

է նախորդ հեղինակների՝ գլխավորապես Ն. Ակինյանի ուսումնասիրության արդյունքները:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքի 180 էջ է:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված են թեմայի կարևորությունն ու արդիականությունը, մատնանշված են հեղինակի առջև դրված նպատակներն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, տրված է հիմնախնդրին վերաբերող սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ԿՅԱՆՔԸ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Կյանքը», ներկայացված է Երեմիա Քյոմուրճյանի կենսագործունեությունը՝ շարակցված նրա տոհմական անցյալի և շրջապատող միջավայրի վերաբերյալ ամենատարբեր տեղեկություններով, որ այս դեպքում, մի կողմից, արտացոլում են անհատի կյանքի համապատկերում ուսումնասիրվող ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական տեղաշարժերի հետագիծը, մյուս կողմից՝ ցույց տալիս հեղինակի պատմահայեցողությունը սնուցանող գլխավոր ակունքներից մեկը: Երեմիա Քյոմուրճյանի կենսագրական տվյալները, որոնց հիմնական սկզբնաղբյուրը հեղինակն ինքն է, տեղ-տեղ ապացնող մանրամասնության ու բազմազանության են հասնում՝ ցույց տալով իր ներքին հուզական աշխարհի պլեբեկուններից մինչև հասարակական հնչեղության հարցերին նրա ունեցած դիրքորոշումների ողջ պատկերը, ինչը բավական արտառոտ է հայ պատմագրական միջավայրի համար: Դարակեսին պոլսահայ կյանքում ձևավորված ազդեցությունների համար պայքարում Քյոմուրճյան ընտանիքի հարաճուն հեղինակության պայմաններում Երեմիա Չելեպիի կենսագրության ուսումնասիրությունը հավակնում է ավելին լինել սոսկ մասնավոր խնդրից:

Երեմիայի կյանքը քանիցս զբաղեցրել է ուսումնասիրողներին, ուստի դժվար է խուսափել նրա կենսագիրներին տեղ-տեղ կրկնելուց: Արդեն հայտնի փաստերը ատենախոսության մեջ ներկայացված են խիստ ընդհանրական ու հպանցիկ: Աղբյուրագիտական վկայությունների հիման վրա առաջ են քաշված կենսագրական այնպիսի տվյալներ, որոնք նորովի են լուսաբանում խնդիրը:

Երեմիա Քյոմուրճյանը ծնվել է 1637 թ. մայիսի 13/22-ին Կ. Պոլսում: Հաստատված է, որ Քյոմուրճյան գերդաստանի ծագումնաբանության ակունքները պետք է փնտրել Բարձր Հայքի Դարանաղյաց գավառում. Ակնից սերված լինելու շրջանառվող վարկածը վերաբերում է Երեմիա Քյոմուրճյանի միայն մայրական ազգականներին: Աղբյուրագիտական տվյալները խոսում են Երեմիա Քյոմուրճյանի կենսագրության՝ անգամ ամենավաղ շրջանի վերաբերյալ: Արդեն ութ տարեկան հասակում Երեմիան ոչ միայն գրաճանաչ էր, այլև կատարել է իր առաջին գրչափորձերը: 1649 թ. ձեռնադրվել է որպես դպիր⁴³, ապա որոշել է այդքանով սահմանափակել հոգևոր առաջխաղացումը: Դեռևս պատանեկան տարիքից նրան է վստահվել Կ. Պոլսում էջմիածնի գանձանակը բռնելու պարտավորությունը, ինչպես

⁴³ Օրագրութիւն, էջ 6:

նաև Երուսաղեմի գանձանակի հասույթի գրագրությունը: Երեմիա Քյոնուրճյանը իրականացրել է նաև Կ. Պոլսի համայնքային ղեկավարության գրագրությունը, եղել է պատրիարքարանի նոտար և խորհրդական: Նրա կենսագրության չքննված դրվագներից է հացագործության բնագավառում ծավալած գործունեությունը. Կ. Պոլսում նա վարել է նաև փռի վերատեսչի պաշտոնը: Ակնհայտ է, որ իր հացածախ խնամակալի՝ Մահտեսի Ամբակունի կարողության տնօրինումը անկարևոր չի եղել Քյոնուրճյանի համար, դրա պարզագույն վկայությունն է այն, որ բազմազբաղ Երեմիան իր ժամանակի մի զգալի մասը հատկացրել է այդ աշխատանքին, հագեցած իր առօրյայի վերաբերյալ նրա զանազան հիշատակումների շարքում շատ են «անտի ի խանութ գնացի» բառերը⁴⁴: Պարզ է դառնում նաև, որ Երեմիան նույնիսկ շատ կարճ ժամանակով ձեռքակալվել է հարկահավաքների կողմից⁴⁵, ինչը նորից հուշում է, որ այս գործում նա շարքային հացթուխի պարտավորություն չի, որ կատարում էր: Արդեն հառաջացած տարիքում Երեմիան զբաղվում է նաև ուսուցչությամբ. իր որդուն՝ Գրիգորիսին ուղղված գրության մեջ կարդում ենք. «Վասն որոյ պարտիս սիրել զիս որպէս զվեհագոյն վարժապետ»⁴⁶: Պահպանված վկայությունները ցույց են տալիս, որ աշակերտներ է ունեցել նաև հացագործության մեջ:

Երեմիա Քյոնուրճյանի կենսագրությունը մեծապես ամբողջանում է այն ժամանակի նշանավոր գործիչների հետ նրա անձնական շփումների ու համագործակցության համապատկերում դիտարկելիս: Կարևոր հարցադրումներ է պարունակում Օսմանյան կայսրության տիտղոսակարգում «չլելայի» եզրի իմաստային ու կիրառական նշանակությունը, որ քննված է ենթազխում:

Երկրորդ ենթագլուխը՝ «Մատենագրական ժառանգությունը», ներկայացնում է Երեմիա Քյոնուրճյանի՝ տարբեր ժամրային ու թեմատիկ ընդգրկման գործերը: Նրա երկասիրությունների տարատեսակ ցանկեր են մեզ հասել, սակայն դրանցից ոչ մեկը լիակատար չէ: Չդրսևորելով կատարյալ և ամբերի մատենագիտություն կազմելու հավակնություն՝ եղած հնարավորությունների սահմաններում, որ հեռու էին համընդգրկուն լինելուց, փորձել ենք տալ Երեմիա Չելեպի Քյոնուրճյանի ձեռագրական ժառանգության քիչ թե շատ ամբողջական նկարագիրը, համաշխարհային և մասնավոր ձեռագրական հավաքածուներում քյոնուրճյանական ինքնագրերի և գրչագրերի ներկայացվածությունը և դրանց հարաբերակցությունը: Ինչքանով է դա մեզ հաջողվել, դժվար է սպառիչ պատասխան տալ, հատկապես եթե նկատի առնենք, որ վերոնշյալ ոչ բոլոր ձեռագրերն են անմիջականորեն եղել մեր տրամադրության ներքո: Աշխատանքը կարևոր է ոչ միայն ներկայացնելու Քյոնուրճյան Երևույթի «ֆիզիկական» սահմանները, այլև օգտակար կլինի հեղինակի քննական բնագրերի պատրաստման և գիտական հրատարակության իրականացման գործում:

Երեմիա Չելեպիի գրական ժառանգությունը ներկայացված է թեմատիկ սկզբունքով՝ ա.պատմագրական-տեղագրական գործերը, բ.կրոնա-դավանաբանական բնույթի ստեղծագործությունները, նամակները, գանձերը,

⁴⁴ Օրագրութիւն, էջ 150 և այլն:

⁴⁵ Նույնը, էջ 180:

⁴⁶ Յաւելուած, էջ 457:

ողբերը, ներբողյանները, որ տրված է «Այլ երկեր» պայմանական խորագրով, գ. տաղերը:

Երկրորդ գլուխը՝ «ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ» ԵՎ «ՏԱՐԵԳՐԱԿԱՆ ՊԱՏՈՒԹԻՒՆ» ԵՐԿԵՐԸ», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Օրագրութիւն» երկը», քննության է առնված Երեմիա Քյոմուրճյանի այս երկասիրության ժանրային առանձնահատկությունների, աղբյուրագիտական արժեքի հարցը: Համաշխարհային գրականության համապատկերում օրագրությունների հայտնվելու նախապատմության ու զարգացման ընթացքի վերաբերյալ տարամետ կարծիքները, առանձին բացառություններով հանդերձ, հաշտ են XVII դարը իբրև առաջին օրագրությունների ի հայտ գալու ժամանակաշրջան դիտարկելու հարցում⁴⁷: Վաղուց մշակված է բնորոշիչների մի ամբողջություն՝ ներհատուկ գլխավորապես օրագրությունների ժանրին: Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն»-ը հետաքրքիր քննություն է բռնում ժանրային առանձնահատկությունների այդ ընդհանրության մեջ դիտարկելիս: Պատմագիտության մեջ գործը հայտնի չէ իր հեղինակային անվանումով: «Օրագրութիւն» վերտառությունը հետագայի ուսումնասիրողների միջամտության հետևանք է. Ղևոնդ վրդ. Փիրղալեմյանը, որ գործը տեսել է ձեռագիր վիճակում, որոշել է այն կոչել «Օրագրութիւն»: Ձեռագրի հրատարակության գործը ստանձնած Մեսրոպ արք. Նշանյանը, Ղ. Փիրղալեմյանի հետևությամբ, պահպանել է այդ անվանումը և մեկընդմիշտ մոռացության մատնել հեղինակային վերագիրը: Ինքը՝ Երեմիա Քյոմուրճյանը, իր երկը խորագրել է «ժայմանակագիր եւ պատմութիւն»⁴⁸: Այսպիսով, մեկտեղված են երեք տարանջատ պատմագրական սկզբունքներ ունեցող ժանրային ձևեր՝ «պատմութիւն», «ժամանակագրութիւն» և «օրագրութիւն»: «Օրագրութիւն»-ը իր բովանդակային առանցքով և այլ առանձնահատկություններով առաջին երկու ժանրի հերքումն է, որով անցնում է պատմագրության «մարդեղացման» ճանապարհը, ինչպես դիպուկ նկատում է Վ. Ժիվովը «մարդու մասնավոր կյանքը ձեռք է բերում մշակութային արժեք»⁴⁹:

Օրագրությունների առաջին բնութագրիչը ժամանակագրական կարգի խստագույն պահպանումն է: Այս առումով Երեմիա Քյոմուրճյանը, կարելի է ասել, գերազանցում է բոլոր սպասելիքները. երկը նա շարադրել է 1648 թ. հունիսի 11-ից 1662 թ. հոկտեմբերի 24-ը: 14 տարիներից յուրաքանչյուրը գրի է առնված առանձին և հեղինակի կողմից հստակ տարբերակված են: Շատ դեպքերում շարադրանքը պահպանել է ամիսների, ավելի հաճախ էլ օրերի անխախտ հերթագայությունը: Քննարկվող ժանրի առանձնահատկություններից է բխում տեքստային միջավայրում օրագրողի անձնականության (ինդիվիդուալիզմ), հեղինակային ինքնագիտակցության հարաբերակցության հարցը շրջապատող իրականության պատմա-քաղաքական շերտի հետ, որի խորության աստիճանով էլ թերևս չափվում է

⁴⁷ Որոշ ուսումնասիրողներ օրագրական վավանդությունների սկզբնավորումը տեսնում են XVI դարում, Ե. Криволапова, К вопросу о генезисе жанра дневника, տե՛ս Ученые записки: электронный научный журнал Курского государственного университета (<http://scientific-notes.ru>), 2012, N 1(21), стр. 3.

⁴⁸ Դիտելի է, որ շարադրանքում նա երկը կոչում է նաև «պատմագրութիւն», տե՛ս Օրագրութիւն, էջ 374:

⁴⁹ Ե. Криволапова, նշվ. աշխ., էջ 5:

ոչ գեղարվեստական բնույթի օրագրությունների, ինչպիսին քննարկվող երկն է, աղբյուրագիտական արժեքը: Քննության առարկա երկն այդ իմաստով շահեկան դիրքում է գտնվում: Երեմիա Քյոնուրճյանը բազմակողմանի կապեր ուներ ոչ միայն հայկական միջավայրում: Իր ազգակցական կապերի, հետազայում նաև զբաղեցրած հասարակական դիրքի բերումով Քյոնուրճյանը գիտակցական կյանքի գրեթե ողջ ընթացքում թե՛ ականատես և նասնակից է եղել իր ժամանակի սոցիալ-քաղաքական իրադարձային տեղաշարժերին ներազգային կյանքում, թե՛ հետևել է օսմանյան կայսրության ներքին ու արտաքին քաղաքական գործընթացներին: Օրագրական այս գրառումներում, անթիվ-անհամար են հիշատակումները նաև հեղինակի և իր մտերիմների առօրյա հոգսերի և խնդիրների վերաբերյալ: Սակայն Քյոնուրճյանի համար ինքնակենսագրական տվյալների հաղորդումը ծրագրային հարց չի եղել, և այս օրագրական գրառումները ինքնանպատակ չեն: «Օրագրութիւն»-ը մենախոսություն է, ինչը, որպես կանոն, բխում է օրագրական ժանրի առանձնահատկություններից⁵⁰, սակայն սա ներկալի ինքնախոսություն չէ: Հեղինակը ունի իր երևակայական ընթերցողը, որին նա հաճախ է դիմում⁵¹: Քիչ չեն նաև ճառախոսական բնույթի հարցադրումներն ու երկարաշունչ տրակտատները:

Այս առանձնահատկությունները Երեմիա Քյոնուրճյանի «Օրագրութիւն» երկասիրության ժանրային պատկանելության հարցում կշեռքի մտարը փոխում են հօգուտ վերջինիս օրագրային պատկանելության՝ ինքնըստինքյան արդարացնելով երկի՝ հետազայի միջամտությամբ քաղաքացիություն ստացած ժանրային ձևաչափը: Մեր դիտարկումներով, սակայն, անհիմն չէ նաև ժանրային պատկանելության հեղինակային մոտեցումը: Որքան էլ Երեմիայի «Օրագրութիւն»-ը առլեցուն է կենցաղային բնույթի տվյալներով, այն նախևառաջ մեծապես անդրադարձումն է կարևորագույն հասարակական-քաղաքական տեղաշարժերի, որոնք դիտարկելի են պատմության համատեքստում և կարող են ընթեռնելի լինել պատմական բնագրի շրջանակներում: Երեմիա Քյոնուրճյանի «Օրագրութիւն»-ը ոչ միայն այսօր հայտնի միակ գլխավոր սկզբնաղբյուրն է XVII դարի երկրորդ կեսին հայության արևմտահայ հատվածում տեղ գտած իրադարձային գործընթացների, այլև ուշի-ուշով և համակողմանի հետևում է օսմանյան կայսրության ներքին ու արտաքին կյանքում տեղի ունեցած դեպքերին՝ տեղեկությունները հաղորդելով ընտրողաբար և որոշակի թեմատիկ տեսակավորմամբ: Սկսած 1659 թ. շարադրամքի ոճը փոխվում է, փաստերը ներկայացված են հակիրճ: Մեզ հայտնի մյուս օրագրություններից այս երկը առանձնանում է իր ունեցած աղբյուրագիտական հենքով, որ զանազան նամակներ են, թղթեր, դատավարական վճռագրեր, հրամաններ կամ դրանց պատճենները: Բացի արխիվային հիմքից՝ «Օրագրութիւն»-ը գրելիս Երեմիա Քյոնուրճյանն օգտագործել է նաև գրավոր այլ սկզբնաղբյուրներ. իր երկին արժանահավատություն հաղորդելու համար նա, հետևելով ընդունված պատմագրական ավանդույթներին, առանց բառացի մեջբերման, վկայակոչում է մի շարք հեղինակների և գրական հուշարձաններ, որոնք

⁵⁰ Богданова Е. В., Языковые особенности жанра дневника, Филологические науки. Вопросы теории и практики Тамбов, 2008. № 1 (1), стр. 4.

⁵¹ «Եւ թէ կամիս լսել գկարգ ւնցուն, լուր ի թվականն Ռճ եւ Ջ-ին», տե՛ս Օրագրութիւն, էջ 374, էջ 402 և այլն:

աներկբա հեղինակություն էին վայելում միջնադարյան հայ պատմագրական միջավայրում:

Երկրորդ ենթագլուխը՝ «Տարեգրական պատմութիւն» երկասիրությունը, Վենետիկի Մխիթարյան մատենադարանում պահվող հմր. 476 ձեռագրի ուսումնասիրությունն է: Պարզ է դառնում, որ Երեմիա Քյոմուրճյանը նպատակ է ունեցել գրելու օսմանյան պատմությունը սկզբից մինչև իր օրերը: Անգամ նախանշել է այն հիմնական ուղղությունները⁵², որոնցով պետք է առաջնորդվի հետագա շարադրանքը գրելիս: Սակայն այդ ծրագիրը նա այդպես էլ չի իրագործում, շարադրանքը կառուցիկ և համակարգված է դառնում թեմատիկ և ժամանակագրական բոլորովին ուրիշ առանցքի շուրջ: Հեղինակը այս երկի պարագայում նախապես ցուցաբերել է որոշակիորեն տարբերակված կառուցվածքային մոտեցում, խմբավորել թեմաները՝ դրանք ներկայացնելով համաձայն կանխավ մտածված հերթականության: Այդ մասին վկայում է նաև Քյոմուրճյանն անձամբ. «Եւ ասին թշնամիք նորա թէ պարտեցան ճէլալիք և բերաւ գլուխք նոցա ի փետրվար ԺԲ զոր ի կարգ արքունեացն պատմելոց ենք»⁵³: Թեմատիկ առումով «Տարեգրական պատմութիւն»-ը բաժանված է երեք հիմնական ուղղության՝ Կ. Պոլսում և մերձակայքում եղած հրդեհների պատմությունը, Կ. Պոլսի հայկական գաղթավայրի անցքերը, օսմանյան ներքին ու արտաքին կյանքի հարցերը: Ժամանակագրական ամենավաղ հիշատակությունը վերաբերում է 1565 թ., վերջինը՝ 1694 թ.: Գրված է հետահայաց (ռետրոսպեկտիվ) սկզբունքով՝ հիմք ունենալով սկզբնաղբյուրների լայն շրջանակ, որ իր մեջ ներառում է թե՛ ավանդական պատմագրության նմուշներ, թե՛ բանահյուսական, վիճակագրական և նամակներ: Երկի աղբյուրագիտական ինքնուրույնությունը, եթե բացառենք օգտագործված նամակները, առավելապես դրսևորվում է 1662-ից մինչև 1660-ական թթ. երկրորդ կեսը ընկած դէպքերի նկարագրության մեջ:

Երրորդ ենթագլուխը՝ «Օրագրութիւն» և «Տարեգրական պատմութիւն» երկերի առնչությունները. համադրական քննություն, համադրական-վերլուծական ճանապարհով ցույց է տալիս այս երկու երկի նմանությունները ու տարբերությունները: «Օրագրութիւն» և «Տարեգրական պատմութիւն» երկասիրությունների հնարավոր ընդհանրությունը աղոտ ենթադրել են Ն. Ակինյանը⁵⁴, Մ. Նշանյանը⁵⁵: Երեմիա Քյոմուրճյանը «Տարեգրական պատմութիւն»-ը գրի է առել «Օրագրութիւն»-ը ավարտելուց (1662 թ.) հետո: Եթե Տարեգրությունը նա անվանում է «Երկրորդ հատոր», ապա Օրագրությունը կոչում է «նախակարգեալ», այսինքն՝ նախընթաց պատմություն. «Նախակարգեալ պատմութիւնս մեր՝ (ընդգծումը-Գ.Ա.) զոր սկսայ ի ծննդենէն Քրիստոսի թվականի ՌՁԾԽԸ որ է թվական մեր ՌՂԷ, յոր ընթանամքս նախասահմանութեամբ արարչին պատահեալ հրկիզութիւնք քաղաքիս և յամենայն իշխանութիւնս օսմանցոց, ուր փայտաշէնքէին ծնունդ թէ և ի քաղաքս»⁵⁶:

⁵² Վենետիկ, ձեռ. հմր 476, թ.12ա-14ա:

⁵³ Նույնը, թ. 156ա:

⁵⁴ Ն. Ակինյան, Երեմիա Չէլչաի Քեմիլիճեան, էջ 93:

⁵⁵ Ստամբուլյոյ պատմութիւն, հ.Բ, էջ 718:

⁵⁶ Վենետիկ, ձեռ. հմր. 476, թ. 20ա:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երեմիա Քյոնուրճյանի «Օրագրութիւն» և «Տարեգրական պատմութիւն» երկասիրությունների միջև կապը ավելի քան անհերքելի է. Օրագրությունը Տարեգրական պատմության համար սկզբնաղբյուր է ծառայել 1648-1662 թթ. իրադարձությունները շարադրելիս: Տարեգրության սկզբնաղբյուրների շարքում Օրագրությունը առաջնային տեղ է գրավում: Օրագրությունն աչքի է ընկնում իր ընդարձակ ու հանգամանակի շարադրանքով: Տարեգրական պատմությունը, հեղինակի իսկ խոստովանությամբ, զգալիորեն համառոտագրված է, սակայն Տարեգրությունը ոչ միայն Օրագրության տառացի կրկնությունը չէ, այլև համապատասխան հատվածներում որոշակիորեն լրացնում է Օրագրության տվյալները, համանուն դեպքերի առանձին դրվագներ դարձնում ավելի հագեցած ու հասկանալի: Ժամանակագրական առումով ավելի հավաստի է Օրագրությունը, տոմարական հաշվումներում հեղինակի թույլ տված վրիպումների պատճառով Տարեգրական պատմության էջերում տեղ են գտել ժամանակագրական անճշտություններ: Անկախ որոշ թերություններից ու բացթողումներից՝ այս երկու ստեղծագործության արդյուրագիտական նշանակությունը հույժ կարևոր է և հանիրավի անտեսված:

Երրորդ գլուխը՝ «ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ», բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ «Կոստանդնուպոլիսը՝ տեղագրական քննության առարկա», քննության են առնված «Համառոտ ստորագրութիւն Կ. Պոլսի նեղուցի», «Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպոլսոյ», «Ստամբուլոյ պատմութիւն» երկերը:

«Համառոտ ստորագրութիւն Կ. Պոլսի նեղուցի» ստեղծագործությունը աշխարհիկ ոճով գրված չափածո տեղագրական երկ է, որ տեղեկություններ է տալիս Բոսֆորի (թրք. Boğaziçi) նեղուցում տեղակայված գյուղերի և մյուս բնակավայրերի մասին, թվարկում դրանց թե՛ ժամանակակից և թե՛ հին անունները: Աշխատանքը համարվում է անհետացած: Նմանատիպ մի աշխատություն է հեղինակել նաև Երեմիա Քյոնուրճյանի եղբոր՝ Կոնիտաս Վկայի թոռ Կոզմաս Քյոնուրճյանը կամ Կոզիմո դը Կարպոնյանոն (Cosimo Comidas de Carbognano, Descrizione topografica dello stato presente di Constantinopoli, Bassano, 1794, կատարվել է նաև երկի թուրքերեն թարգմանությունը): Այն ուսումնասիրողները, որ միաժամանակ ծանոթ են եղել երկու գործին էլ, վկայում են, որ Կոզմասը օգտվել է իր ազգականի աշխատանքից⁵⁷:

1660 թ. հուլիսի 14-ին Կ. Պոլսում տեղի ունեցած խոշոր հրդեհի նկարագրությանն է նվիրված «Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպոլսոյ» երկը: Գործի անվանումը հեղինակային չէ: Աշխատանքը գրելու շարժառիթ է հանդիսացել հեղինակի «Տարեգրական պատմութիւն» երկը, որտեղ 1660 թ. հրդեհին վերաբերող հատվածը համարելով խառն ու վայրիվերո՝ հեղինակը նպատակահարմար է գտել տարերային այս աղետին առանձին երկասիրություն նվիրել. «...տեղիս զղիպուած հրոյն ի մէջ պատմութեանց թէ՛ զրեցից երկի ինձ խառն ընդ այլ իմն գործիսն պատահեալս: Վասնորոյ յետոյ հոգ տարեալ աշխատանօք ի միում տետրակիս ուրոյն հավաքեցի կարգաւ որ յիմում ժամանակումս դիպեցաւ զի ի գիւտ լիցի սա

⁵⁷ Ստամբուլոյ պատմութիւն, էջ 475: «Բիւրակն», Պօլիս, 1898, թիւ 34-35, էջ 612: Ղ. Ինճիճեան, Ամարանոց բիւզանդեան, տես Յառաջաբանութիւն, էջ 6: Հմմտ. Նույնի՝ Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հատոր Ե, էջ 156:

խնդրողաց դիրագույնիք»⁵⁸: Ցույց է տրված Հրակիզման պատմության աղբյուրագիտական հենքը. ակնհայտ են աղերսները Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն», «Տարեգրական պատմութիւն» երկերի, Աստվածաշնչի հետ: Երկուն հեղինակը ներառել է մեծ թվով կաֆաներ, ականատեսների վկայություններ, վիմագիր արձանագրություններ:

Երեմիա Քյոմուրճյանի տեղագրական գործերի զարդը «Ստամպուլոյ պատմութիւն» ստեղծագործությունն է: Երկը որոշ ընդմիջումներով գրի է առնվել 1661-1681 թթ. միջոցին: Ներկայացված են երկի կառուցվածքը, շարադրման հանգամանքները, տեղագրության ուղեգիծը:

Երկասիրության շարադրանքի հիմքում ընկած է քաղաքի տեղագրական նկարագրությունը, ուստի հեղինակը չի առնչվում աղբյուրագիտական շատ մեծ շերտի հետ՝ ըստ էության, դրա անհրաժեշտությունը չունենալով: Երեմիա Քյոմուրճյանի «Ստամպուլոյ պատմութիւն» գործի սկզբնաղբյուրները կարելի է բաժանել երկու խմբի՝ բանավոր և գրավոր: Ընդ որում, առհասարակ իր պատմագրական ժառանգությանը հատուկ օրինաչափությամբ՝ այս երկի պարագային ևս հեղինակը գերապատվություն է տվել բանավոր նյութին, որ ավանդվել է հոգևոր ու ժողովրդական երաժշտության նմուշների, տարատեսակ կենցաղագրական-հունորային պատմությունների միջոցով, որ ուրվագծում են ժամանակի պոլսյան քաղաքային ֆուլկլորի դեռևս նախնական դրսևորումները: Երկասիրության գրավոր աղբյուրներն են հայկական, բյուզանդական, թուրքական սկզբնաղբյուրները, ինչպես նաև վիմագիր արձանագրությունները:

Երեմիա Քյոմուրճյանի «Ստամպուլոյ պատմութիւն»-ը սկզբնաղբյուրային մեծ արժեք ունի Կ.Պոլսի տեղագրությանը անդրադարձած հետազայի հեղինակների համար: Ատենախոսության մեջ ցույց է տրված Սարգիս դպիր Հովհաննիսյանի «Վիպագրութիւն Կոստանդնուպոլիս մայրաքաղաքին» և Ղ. Ինճիճյանի «Ամարանոց բիւզանդեան» գործերի հարազատությունը Քյոմուրճյանի բնագրին: Աղբյուրագիտական տվյալների համադրության միջոցով պարզ է դառնում, որ եթե Ղ. Ինճիճյանը որոշակի քննական մոտեցում է ցուցաբերել Երեմիայի հաղորդած վկայություններին, ապա Ս. Հովհաննիսյանը իր երկը շարադրել է կատարելապես վերջինիս հետևությամբ, տեղ-տեղ՝ կրկնողությամբ:

Երկրորդ ենթագլուխը՝ «Աշխարհագրութիւն կան Հայաստանեայց եկեղեցւոյ քարտեզ» երկասիրությունը, Անրկայացնում է 1691 թ. բոլոնիացի ազնվական Լուդովիկո (Լուիջի) Ֆերդինանտո Մարսիլի պատվերով կազմած լայնածավալ այս ատլասի տեղագրությունը: Քարտեզում տեղ են գտել մոտ ութ հարյուր անուն սրբավայր՝ սկսած Գանձասարի կաթողիկոսության տարածքից⁵⁹ մինչև Սսի կաթողիկոսության տարածքը՝ ընդգրկելով ինչպես Էջմիածնի և Աղթամարի կաթողիկոսության տիրույթները, այնպես էլ Երուսաղեմը՝ իր շրջակայքով: Աշխատանքը (358սմ/120սմ) բաղկացած է 30 գունավոր քարտեզներից, որոնցից առաջինը մնացած 29 տախտակների ամբողջական պատկերն է: Այս տեղագրությունը համապատասխանեցվել է ժամանակակից քարտեզագրության չափորոշիչներին և ներկայացվել առանձին մենագրությամբ⁶⁰:

⁵⁸ Վենետիկ ձեռ. հմր. 476, թ. 19ա:

⁵⁹ Ավելի մանրամասն, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 2003, N 1, էջ 158:

⁶⁰ Տե՛ս ծմբ. 7:

Երրորդ ենթագլխում՝ «Պատմութիւն Տեղեաց տնօրինականաց» գործը, ներկայացված է Երեմիա Քյոմուրճյանի տպարանական գործունեության կարճատև տարիների արգասիքը: Շարադրանքն աչքի չի ընկնում պատմական թեմաների լայնաշերտ հիմքով, ներկայացված է Երուսաղեմի տեղագրական նկարագրությունը՝ հաճախ շաղկապված աստվածաշնչյան հայտնի պատմությունների՝ տրված քյոմուրճյանական մեկնաբանություններին:

Չորրորդ գլուխը՝ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԺԱՆՐԸ ԵՐԵՄԻԱ ՔՅՈՍՈՒՐՃՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Պատմագրական երկերը՝ Օսմանյան կայսրության պատմության սկզբնաղբյուր», քննության են առնված «Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ Օսմանցոց թագաւորացն», «Համառօտ պատմութիւնք թագաւորաց Օսմանցոց», «Պատմութիւն պատերազմին Պէչայ, որ ընդ օսմանցիս և ընդ գերմանացիս», «Յաղագս սապէթա անուն Ջմիւռնացի հրէի միոյ» գործերը:

«Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ» երկը ընդգրկում է Օսմանյան կայսրության շուրջ 400 տարվա (1299-1678), այն է՝ օսմանյան 19 սուլթանների⁶¹ պատմությունը: Ստեղծագործությունը չափածո է, հեղինակն ընտրել է պատմության պարբերացման քառամասն համակարգը, ժամանակագրությունը տրված է հիջրայի և Հայոց թվականով: Ներկայացված է Պատմության աղբյուրագիտական հենքը, որ ապահովված էր թուրքերեն և հայերեն թե՛ գրավոր, թե՛ բանավոր վկայություններով: Գնահատված է քննվող աշխատանքի սկզբնաղբյուրային արժեքը նույնպես:

Հետաքրքրական է «Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ»-ի ունեցած առնչակցությունը հայ ժողովրդական վեպի առանձին դրվագներին և դրանց ազդեցությունը: Ցույց է տրված, որ Երեմիա Քյոմուրճյանն այստեղ դիմել է հավաստի պատմական դեպքերը ժողովրդական վեպից վերցված կաղապարներով շարադրելու եղանակին: Օսմանյան սուլթանների պատմությանը նվիրված շարադրանքում իրենց վառ արտահայտությունն են գտել Արտաշես և Արտավազդ, Արշակ և Շապուհ ավանդագրույցների բովանդակային և գաղափարական ուղերձները:

Օսմանյան պատմությանն է նվիրված «Համառօտ պատմութիւնք թագաւորաց Օսմանցոց» անտիպ երկը: Աշխատանքը սկսվում է սուլթան Օսման I-ի (1299-1324) և ավարտվում սուլթան Մուստաֆա II-ի (1695-1703) գահակալությամբ, ավելի սուույգ՝ գահակալության առաջին տարով՝ 1695 թվականով: Սա Երեմիա Քյոմուրճյանի ամենից մեծ համարում վայելող ստեղծագործություններից մեկն է, մեզ հայտնի է գործի 7 ընդօրինակություն: Օսմանցոց պատմության արձակ տարբերակը թեմատիկ առունով ներկայացնում է նշված ժամանակաշրջանում օսմանյան սուլթանների իշխանության տարիները, նրանց իրականացրած ներքին ու արտաքին քաղաքականության տարատեսակ դրվագներ, ռազմական ձեռնարկումները ու դրանց արդյունքները, շինարարական աշխատանքները, դիվանագիտական հարաբերությունները: Պատմագիրը առանձնակի ուշադրության է արժանացրել վեզիրների գործունեությունը: «Պատմութիւն»-ը գրի է առնված հիջրայի թվականությամբ: ՄՄ հմր. 1786 ձեռագրի հիման վրա ցույց են տրված երկի աղբյուրագիտական առնչությունները: Պարզվում է, որ Երեմիա Քյոմուրճյանը ոչ թե հեղինակել, այլ թարգմանել է այս երկը: Սակայն մեր կարծիքով նա այս

⁶¹ Նրանցից Օսման I-ը և Օրհանը բեյ են կոչվել:

թարգմանությունն իրականացրել է՝ հետևելով իր որդեգրած թարգմանական ավանդույթներին, այն է՝ մեծապես միջամտել բնագրին՝ հարստացնելով իր տողերով ու ինքնուրույն ներմուծումներով:

Վենետիկի Մխիթարյան ձեռագրատանն է գտնվում հեղինակի «Պատմութիւն պատերազմին Պէջայ, որ ընդ օսմանցիս և ընդ գերմանացիս» գործը՝ անտիպ վիճակով: Ս. Սոմայանը⁶² և Յ. Տեր-Անդրեասյանը⁶³ ծանոթ են ավստրո-թուրքական պատերազմներին Երեմիա Քյոմուրճյանի կատարած պատմական անդրադարձներին՝ դրանք զետեղելով Վենետիկի հմր. 476 ձեռագրում: Աշխատանքը մեր տրամադրության տակ չի եղել, սակայն կարծում ենք, որ այն ներկայացված է Վենետիկի հմր. 293 ձեռագրում:

Օսմանյան կայսրության եթնիկ և կրոնական հանրույթների հրահրած դավանաբանական տարատեսակ վեճերն ու շահախնդրությունները, որոնցով առլեցուն է XVII դարի պատմական ողջ հետմաբեմը, անընդմեջ մարտահրավերներ էին նետում հայ ժողովրդի տարբեր հատվածներին և սոցիալական խմբերին՝ ստիպելով այդ անենակուլ պայթարին ըստ արժանվոյսն դիմակայելու և կենսունակ լինելու ճանապարհներ գտնել: Որպես ժամանակի խնդիրներին քաջատեղյակ մտածող՝ Երեմիա Քյոմուրճյանը չէր կարող անհաղորդ մնալ բոլոր այն հավակնություններին, ուստի և հանձն է առնում դիմելու պատմական-դավանաբանական բազմաբնույթ ակնարկների և վկայակոչումների: «Յաղագս Սապէթա ամուն Զմիւռնացի հրէի միոյ» երկում այս դիտանկյունից են ներկայացված 1660-ական թթ. երկրորդ կեսին կայսրության հրեաների շրջանում ծայր առած հակակառավարական խնդրումները: Յույց է տրված, որ տարիներ ի վեր այս գործը Քյոմուրճյանի գրչին վերագրելը մոլորություն է եղել: Երեմիա Չելեպին փոխադրել է այն և այդպես շրջանառել հայկական միջավայրում:

Երկրորդ ենթազխում՝ «Հայոց պատմության հարցերը Երեմիա Քյոմուրճյանի պատմագրության մեջ», ներկայացված են հեղինակի «Գիրք պատմաբանութեանց» (Վենետիկ, ձեռ. հմր. 509), «Կոնդակ Ս. Կարապետ եկեղեցւոյ ի Կրետէ կղզւոջ» (Փարիզի Ազգային գրադարան, ձեռ. հմր. 338), «Վիպասանութիւն յԱպրօ Զէլէպի» (ներկայիս տեղն անհայտ է), «Տաճկերէն պատմութիւն հայոց առեալ ի Խորենացոյն թարգմանաբար» (Վենետիկ, ձեռ. հմր. 411), «Վիպասանութիւն առման Ս. Գեորգ եկեղեցւոյ, որ ի Մակեդոնիայ ի Փիլիպուպոլիս, ի ձեռաց ազգին Յունաց», «Հարցմանց գիրք համառօտ» գործերը: Բացի վերջին երկու աշխատանքից՝ այս ենթազխում քննարկված մնացած բոլոր երկասիրությունները մեր տրամադրության տակ չեն եղել, դրանց վերաբերյալ մեր տեղեկությունները միջնորդավորված են: Սրանք կարևոր ներդրում են ոչ միայն հայոց ընդհանրական, այլև հայ գաղթավայրերի պատմության տարբեր դրվագներ ու խնդիրներ լուսաբանելու գործում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները ամփոփված են հետևյալ եզրակացություններում.

1. Երեմիա Քյոմուրճյանի գրական ժառանգությունն աչքի է ընկնում ունեցած պատկառազորու ծավալով և ընդգրկմամբ, ժանրային բազմազանությամբ ու առաջադրած թեմատիկ խնդիրների լայնաշերտ հիմքով ու արդիականությամբ:

⁶² S. Somal, նշվ. աշխ., էջ 159-160:

⁶³ Eremya Çelebi Komürcüyan, s. 21.

Բովանդակային առումով այն կարելի է բաժանել հետևյալ մեծ խմբերի. պատմագրական-տեղագրական երկեր, կրոնա-դավանաբանական բնույթի գործեր, տաղեր: Հաշվված է ավելի քան վեց տասնյակ անուն ստեղծագործություն՝ ավելի քան 135 ինքնագիր և գրչագիր օրինակով: Քրոնոլոգյանի գրական վաստակը մեծ համարում է վայելել ուշ միջնադարում, այդ է վկայում նրա ստեղծագործությունների ընդօրինակվածության ու տարածվածության բարձր աստիճանը:

2. Հսկայածավալ այս ժառանգությունը մեզ է հասել նկատելի կորուստներով, ինչի մասին իմանում ենք թե՛ հեղինակի և թե՛ հետագա վկայություններից. այսպես, անհայտ են նրա հեղինակած պատմությունները Լենկ-Թեմուրի գործունեության, ջալալիական ապստամբությունների պատմության, ինչպես նաև Կ. Պոլսի աղբյուրների և ջրավազանների նկարագրության վերաբերյալ: Երբևէ ուսումնասիրողներին հայտնի են եղել նրա «Ստորագրութիւն Կոստանդնուպօլսոյ նեղուցի», «Վիպասանութիւն յկարօ Չէլէպի» գործերը. առաջին գործը եթե ոչ տառաջիորեն, ապա մեծապես օգտագործվել է Կոմիտաս Քյոնուրճյանի թո՛՛ւ Կոզմոս դը Կարպոնյանոյի նույնաբովանդակ իտալերեն աշխատասիրության մեջ: «Վիպասանութիւն»-ը կարող է մաս կազմել Վենետիկի Մխիթարյան ձեռագրատանը գտնվող «Ռտանաւոր բանք ի խնդրոյ Աբրահամ Չէլէպոյն Պելկրատցոյն» գործի (Վենետիկ, ձեռ. հմր. 1155): Վերջին վկայությունները գործի մասին հաղորդում են Ն. Ակինյանը և Ղ. Փիրղալեմյանը:

3. Երեմիա Քյոնուրճյանը օրագրական ժանրի սկզբնավորողներից է հայ մատենագրության մեջ. նրա «Օրագրութիւն» երկն առաջիններից է հայ պատմագրական իրականության մեջ, որ իր էջերում մեծապես տեղ է տալիս մարդու առօրյա գործերին, կենցաղին, զբաղմունքներին, տարատեսակ խնդիրներին՝ պատմագրական բնագրում վերջապես առանցքային դեր վերապահելով վերջինին: Հեղինակն իր երկը կոչել է «Ժամանակայգիր եւ պատմութիւն», «Օրագրութիւն» անվանումը հետագայի ուսումնասիրողների միջամտության արդյունք է: Այս դեպքում երկու կողմն էլ չեն սխալվել. ժանրային պատկանելության տեսակետից գործը օրագրության և պատմության լավագույն համադրություն է և անցյալի պատմագրական ավանդույթների ու գրականության նորամույժ սկզբունքների ու զարգացումների մեկտեղման փայլուն կանխադեպ: Երկասիրությունը առաջնային սկզբնաղբյուր է ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության արտաքին ու ներքին քաղաքական զարգացումների, Կ. Պոլսի հայ գաղթավայրի պատմության գիտական ուսումնասիրության համար:

4. Հայագիտության բազում շրջանակների համար տարիներ ի վեր միջնորդավորված կերպով աղբյուրագիտական կարևոր նշանակություն է ունեցել Երեմիա Քյոնուրճյանի անտիպ «Տարեգրական պատմութիւն» երկը: Երկի ժամանակագրական և թեմատիկ ընդգրկումը հեղինակային տեսլականով ի սկզբանե բավական մեծ է եղել. գործնականում, սակայն, համակարգված շարադրանքի առաջին վկայությունը վերաբերում է 1565, վերջինը՝ 1694 թվականներին: Տարեգրական պատմության համար աղբյուրագիտական չափազանց մեծ արժեք ունի Երեմիա Քյոնուրճյանի «Օրագրութիւն» երկը. 1648-1662 թթ. պատմությունը շարադրանքում «Տարեգրական պատմութիւն»-ը մեծապես հետևում է Օրագրության որդեգրած թե՛ բովանդակային և թե՛ կառուցվածքային սկզբունքներին, ինչով էլ բացատրվում է Տարեգրական պատմության շարադրանքում 1648-ից մինչև 1660-ական թթ. երկրորդ կեսն ընկած

ժամանակահատվածի անցքերի խիստ կանոնավոր և մանրամասն ներկայացման հանգամանքը: Բովանդակային առումով երկուսն էրեք շերտ կան առանձնացված. 4. Պոլսում պատահած հրդեհների, ժամանակի պոլսահայ հիմնախնդիրների և օսմանյան քաղաքական դեպքերի պատմությունը:

5. Պատմագրական հնավանդ ժանրերի հետևությամբ՝ Երեմիա Քյոնուրճյանի գրական նախասիրությունների համապատկերում առանձնակի է տեղագրություններին վերապահված դերը: Տեղագրական նրա հղացումներում 4. Պոլիսը իր շրջակայքով ունի նախապատիվ դիրք և հեղինակի նմանաբնույթ գործերի ընդհանուր հարաբերակցության մեջ՝ իրեն վերապահված պատկառելի բաժինը: Քյոնուրճյանի տեղագրություններն իրենց ստեղծման հիմքում ունեցել են տնտեսական-քաղաքական շարժառիթներ՝ տեղեկության հարուստ պաշարներ պարունակելով աշխարհագրական լայնատարած շերտերի ժողովրդագրական պատկերի վերաբերյալ: Այս ստեղծագործությունները աղբյուրագիտական հենք են հանդիսացել հետագայի ուսումնասիրությունների համար. ակնհայտ է Երեմիա Քյոնուրճյանի ստեղծագործական՝ տեղ-տեղ բառացի ազդեցությունը Սարգիս դալի Յովհաննիսյանի, Կոզիմո դը Կարպոնյանոյի, Ղուկաս Ինճիճյանի և այլոց տեղագրական գործերում:

6. Երեմիա Քյոնուրճյանի պատմագրական ժառանգության մի սովոր մասն են կազմում «պատմութիւն»-ները կամ, ինչպես ինքն է երբեմն կոչում, «վիպասանութիւն»-ները: Ժամանակագրական մեծ ընդգրկմամբ ամբողջական «պատմութիւն»-ներ գրելու նախորդ ժամանակների պատմագրական ավանդույթը ուսումնասիրվող շրջանում որոշակիորեն խմբագրվել էր. տիրապետելով հանդերձ «պատմութիւն» գրելու անցյալի պատմագրական սկզբունքներին՝ հայ մատենագրական միտքը նախապատվություն սկսեց տալ ժամանակագրական համեմատաբար նեղ ընդգրկում ունեցող պատմական թեմաներին, այլևս փոխարինելու են գալիս մի քանի տասնամյակի անգամ տարվա ընդգրկում ունեցող «պատմութիւն»-ները: Երեմիա Քյոնուրճյանը կիրառում է թե՛ դասական ավանդույթները, թե՛ նորահայտ սկզբունքները. նրա պատմագրական ժառանգությունը մեզ է ավանդում ժամանակագրական ինչպես երկար, այնպես էլ կարճ տևողության պատմական դեպքերի նկարագրություններ: Թեմատիկ առումով Քյոնուրճյանի «պատմութիւն»-ները վերաբերում են օսմանյան կայսրության 400-ամյա պատմական իրադարձություններին, հայոց թագավորություններին, XVII դարում ավստրո-թուրքական պատերազմներին, Կրետի պատերազմին (1645-1669), օսմանյան հրեաների ապստամբական ելույթներին (1666 թ.): Հաղորդված աղբյուրագիտական տվյալները հավասարապես լույս են սփռում օսմանյան, եվրոպական, հայոց պատմության անհայտ դրվագների բացահայտման վրա:

7. Երեմիա Քյոնուրճյանի պատմագրական ժառանգության աղբյուրագիտական հենքը իր բազմազանությամբ հանդերձ նրա գրեթե բոլոր երկասիրություններում ենթարկվում է որոշակի օրինաչափությունների. քյոնուրճյանական բնագրերի աղբյուրների մի խումբը ներկայացնում են թուրքական սկզբնաղբյուրները, տեղ-տեղ վկայություններ են հանդիպում նաև բյուզանդական աղբյուրներից: Երեմիա Չելեպին մեծ հեղինակություն է վերագրում Աստվածաշնչին՝ պատեհ առիթի դեպքում կատարելով անհրաժեշտ վկայակոչումներ: Սկզբնաղբյուրների հաջորդ խումբը հայկական մատենագրության տվյալներն են. Երեմիա Քյոնուրճյանը քաջատեղյակ է Պատմահայր Մովսես Խորենացու, Թովմա

Մեծոփեցու, Առաքել Դավրիժեցու, Առաքել Բաղիշեցու և միջնադարյան այլ վկայողների գործերին: Սակայն սրանք, այնուամենայնիվ, Քյոնուրճյանի գրական որոնումների համար երկրորդական նշանակություն են ունեցել: Աղբյուրագիտական առաջին իսկ օգնությունը Երեմիա Քյոնուրճյանը ստացել է ինքն իրենից. այդ սկզբունքով աղբյուրագիտական տվյալներ նա վերցրել է զլխավորապես «Օրագրութիւն», «Տարեգրական պատմութիւն», ինչպես նաև «Վիպասանութիւն յառումն Կրետե կղզւոյ», «Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպօլսոյ» երկերից: Մեծ արժեք է տվել պատմագիրը ասացողների, երգիչների, ականատես և ականջալուր մարդկանց վկայություններին: Քիչ չեն նաև վիմագիր և դամբանագիր արձանագրությունների կիրարկման դեպքերը: Պաշտոնի բերումով Քյոնուրճյանը մեծապես տեղյակ է եղել և օգտագործել զանազան թղթեր, նամակներ ու դիմումներ:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Երեմիա Չելեպի Քյոնուրճյանի տպագրական գործունեությունը, «Էջմիածին», 2012, թիվ 8, էջ 48-54:
2. Историографическое наследие Еремии Челеби Кемурчяна как первоисточник истории этнических меньшинств Османской империи, "International science conference dedicated to 135th anniversary of returning Ajara to motherland South-West Georgia", III, Batumi, 2013, с. 75-84.
3. Еремия Челеби Кемурчян: жизнь и творческая деятельность (краткий очерк), "Balkanistic forum", N3, Blagoevgrad, 2013, с. 209-219.
4. Historiological heritage of Yeremia Qyomurchyan, "Homo Loquens", N5, Tbilisi, 2013, p. 128-134.
5. Երեմիա Չելեպի Քյոնուրճյանի ձեռագրական ժառանգությունը, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 2014, թիվ 20, էջ 349-398:

АЙВАЗЯН ГАЯНЭ АНДРАНИКОВНА
ИСТОРИОГРАФИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ ЕРЕМИИ КЕМУРЧЯНА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 “Историография, источниковедение”.

Защита состоится 23-го сентября 2014 г. в 14⁰⁰, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Данное исследование посвящено проблемам жизни и историографического наследия одного из последних заслуженных деятелей армянской историографии позднего средневековья, Еремии Челеби Кемурчяна.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка использованных источников и литературы. Во введении обоснованы важность и актуальность исследования, научная новизна работы, указаны цели и задачи, поставленные перед автором, проанализированы использованные источники и литература.

В первой главе работы под названием “Жизнь и историографическое наследие” представлена деятельность Еремии Кемурчяна, связанная с его родовым прошлым и самыми разными сведениями окружающей среды, которые в данном случае отображают с одной стороны траекторию социально-политических изменений в призме жизнедеятельности одного человека, с другой стороны они показывают один из главных истоков подпитывающих историческую концепцию автора.

В той же главе рассматривается в том числе и историографическое наследие автора: показано насколько представлены рукописные и самописные работы Кемурчяна в мировых и частных коллекциях рукописей, и их соотношение. Литературное наследие автора представлено в тематическом порядке: а. историографические-топографические работы, б. разные сочинения религиозного характера, письма, песни, плачи, оды, которые представлены под условным заглавием “Другие сочинения”, в. стихи.

Во второй главе под названием “Сочинения “Дневник” и “Летописная история” рассмотрен вопрос жанровых особенностей и источниковедческой

ценности данных работ Еремии Кемурчяна. Несмотря на то, что на фоне мировой литературы мнения о предыстории появления первых дневников и их дальнейшем развитии расходятся, касательно их появления в XVII веке нет особых разногласий, армянская историографическая мысль, в лице Еремии Кемурчяна, так же шла в ногу с мировыми тенденциями. Путем сравнительного анализа показаны сходства и различия двух сочинений автора. Дневник служил источником для Летописной истории при изложении событий 1648-1662 годов. Летописная история по признанию самого автора значительно сокращена, но она не является буквальным повторением Дневника, но существенно дополняет соответствующие разделы работы.

В третьей главе под названием "Топографические сочинения" представлены пять работ Еремии Кемурчяна топографического характера. В них особое место занимает описание Стамбула и окрестностей, показана источниковедческая основа данных сочинений, была проведена классификация и сопоставительный анализ устных и письменных источников.

В четвертой главе под заглавием «Жанр "История" в литературном наследии Еремии Кемурчяна», по отдельности рассмотрены вопросы Османской империи и армянской истории в историографических работах автора. 400-летняя история Османской империи неоднократно становилась сюжетом историографической концепции Еремии Кемурчяна. Он излагает события как представитель османской реальности принося в армянскую летопись первую всецелую историю Османской империи.

В той же главе рассматриваются так же вопросы касающиеся основных проблем истории армянского народа в историографическом наследии автора. Несмотря на то, что не все работы данного характера были в нашем распоряжении, мы использовали сведения этих работ посредническим образом, но в этих сочинениях имеют место очень важные сведения, и они могут внедрить необходимые коррективы как в изучение истории армянского народа в целом, так и в изучение истории армянских колоний.

В заключении подведены итоги проведенной работы и изложены основные выводы исследования.

AYVAZYAN GAYANE ANDRANIK

HISTORIOGRAPHICAL HERITAGE OF YEREMIA QYOMURCHYAN

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "Historiography and source study" 07.00.05

The defense of the dissertation will be held on the 23th of september, 2014, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4).

SUMMARY

This study focuses on the problems of life and historiographical heritage of one of the last honored Armenian historiographs of the late Middle Ages, Yeremia Chelebi Qyomurchyan.

The thesis consists of an introduction, four chapters, conclusions and a list of used sources and literature. The importance and relevance of the research, its scientific novelty, the goals and tasks set by the author are argued in the introduction, an analyze of used sources and literature is done.

In the first chapter entitled "Life and historiographical heritage" it is represented Yeremia Kyomurchyan's activities associated with its ancestral past and with various data of his environment, which in this case represent one hand the path of socio-political changes in the prism of life of one man, on the other hand, they show one of the main sources of fueling the historical concept of the author.

In the same chapter we have discussed also the historiographical heritage of the author: it is shown to what extent are presented manuscripts of Qyomurchyan in the world and private collections of manuscripts. Literary Heritage of the author is presented in thematic order: a. historiographical-topographical writings, b. different religious writings, letters, songs, laments, odes, which are presented under the title "Other Works", and c. poems.

In the second chapter entitled "Diary" and "Annalistic history" we have considered genre features and values of the source data in Yeremia Qyomurchyan's works.

Despite the fact that in the context of world literature, the opinions on history and appearance of the first diaries and on their further development diverge, there are no special disagreements regarding their appearance in the XVII century, as to the Armenian historiographical thought, it also kept pace with the global tendencies, represented by Yeremia Qyomurchyan. We have shown similarities and differences between the following two works of the author through a comparative analysis. Diary served as a source for Annalistic history when recounting the events of the period in 1648-1662. On recognition of the author, the Annalistic history was greatly reduced, though it is not a literal repetition of the Diary, but significantly supplements the relevant sections of the work.

In the third chapter entitled "Topographical works" papers of topographical character by Yeremia Qyomurchyan are presented. The description of Istanbul and the surrounding area occupies a special place in these writings, the base of source study in the works is shown here, we have also classified and made a comparative analysis of oral and written sources.

In the fourth chapter entitled "Genre of "History" in the literary heritage of Yereimiya Qyomurchyan" the issues of the Ottoman Empire and the Armenian history in the historiographical heritage of the author are separately discussed. The 400-year history of the Ottoman Empire has been repeatedly subject to historiographical concept of Yeremia Qyomurchyan. He described events as a representative of the reality of the Ottoman Empire and brought to the Armenian annals the first wholehearted history of the Ottoman Empire.

The same chapter discusses also the issues related to the basic problems of the history of the Armenian people in historiographical heritage of the author. Despite the fact that not all the works of this nature have been in our location, we used the information of these works in mediation way, but these works contain very significant information and can implement the necessary adjustments in the research of the Armenian people's history as a whole, as well as in the study of the Armenian colonies' history.

The results of the undertaken work and the main findings of the study are summarized in the conclusion.